

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՍՏԻՃԱՆ

Հունիսի 14-ին Մոսկվայի ռուսաց եկեղեցու հոգևոր ակադեմիայում Մայր Աթոռի միաբան տ. Անանիա վրդ. Արաբաջյանը հանդես է եկել աստվածաբանական գիտությունների թեկնածուի աստիճան ստանալու համար նախապես ներկայացրած իր ավարտաճառի կամ դիսերտացիոն աշխատանքի բանավոր պաշտպանությամբ:

Ավարտաճառի թեման է՝ «Եզնիկ Կողբացու աստվածաբանական հայացքները»: Այն բաղկացած է 4 գլուխներից, ներածությունից և վերջաբանից: Ընդամենը 111 մեքենագրված էջ:

Ա գլուխ. Եզնիկ Կողբացին և նրա «Եղծ աղանդոց» աշխատությունը.

Բ գլուխ. Եզնիկ Կողբացու «Հակաճառություն»-ը.

ա) Ընդդեմ հեթանոսական կրոնների, բաբելոնյան աստղագիտության և ժողովրդական հավատալիքների.

բ) Ընդդեմ «Քէշին պարսից» կամ պարսկական կրոնի.

գ) Ընդդեմ մինչքրիստոնեական փիլիսոփաների (Պյութակորաս, Պլատոն, Էպիկուր) և ընդդեմ ստոյիկության.

դ) Ընդդեմ քրիստոնյա աղանդավորների (Մարկիոն, Վալենտին և ուրիշներ).

Գ գլուխ. Եզնիկ Կողբացու աստվածաբանական հայացքները կամ ուսմունքը.

Քրիստոսաբանություն (Հայր Աստված, Որդի Աստված և Հոգին սուրբ. Աստված. Ամենասուրբ Երրորդություն), **եկեղեցի** (episkopություն, սրբերի բարեխոսություն, սազատ կամք, ճակատագիր, երազ, մարմինների հարություն և վախճանաբանություն), **բարու և չարի վարդապետություն** (հրեշտակ, սատանա).

Դ գլուխ. Եզնիկ վարդապետ Կողբացու «Խրատք»:

Անանիա վրդ. Արաբաջյանը ծնվել է 1951

թվականին Երևանում, ավազանի անունով՝ Ավետիք: 1958—68 թթ. սովորել և ավարտել է Երևանի № 52 միջնակարգ դպրոցը:

Հոգևոր ճեմարան է ընդունվել 1970 թվականին և ավարտել այն 1973 թվականին փայլուն հաջողությամբ:

Ավարտական նյութն է եղել՝ «Ռուս ուղղափառ եկեղեցին»:

1972 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1973 թվականին՝ աբեղա:

1975 թվականին ստացել է մասնավոր վարդապետական իշխանության աստիճան: Վարդապետական ավարտական թեման է եղել՝ «Ռուս եկեղեցական-աստվածաբանական գրականությունը հայ առաքելական եկեղեցու մասին»:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ 1973—1975 թվականներին սովորել և էքստերն կարգով ավարտել է Մոսկվայում՝ Զագորսկի հոգևոր ակադեմիայի քառամյա դասընթացը բարձր գնահատականներով և իր ուսումը շարունակել, նույն հաստատության ուսումնական խորհրդի հայրաբանության ամբիոնի բացառիկ որոշումով՝ ասպիրանտուրական բաժնում, ուր և գրել ու պաշտպանել է իր թեկնածուական աշխատությունը:

Տ. Անանիա վարդապետը նույն տարիներին և մինչև 1976 թվականի փետրվարը եղել է հոգևոր հովիվը Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցու:

Անանիա վարդապետ Արաբաջյանը այժմ աշխատանքի է անցել ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում որպես փոխտեսուչ և կրոնագիտական առարկաների դասախոս:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է տ. Անանիա վրդ. Արաբաջյանին ու մաղթում նրան նոր հաջողություններ հոգևոր-եկեղեցական, կրթական ծառայության ճանապարհի վրա՝ ի միխիթարություն Հայոց Հայրապետի և ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Ա. Հ.